


[157515]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԺՕ» ՊՆԿԿԿԿԿԿԿԿ 2015թ.


N 177-ՆԱ/Ե

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՈՐՈՂՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 26-ի նիստի N 13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հավելվածի 1.1-ին կետի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N1821-Ն որոշման N1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:


Ա. ԱՄՍԻՐՅԱՆ

Ուղեցույց Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման

I. Ներածություն

1. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցը (այսուհետ՝ ուղեցույց) որպես գործնական մեթոդաբանություն կարող է ծառայել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների, այսուհետ՝ տարածքային մարմին) սոցիալական աշխատողների (ղեպք վարողների), ոստիկանների, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող, ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող և ընտանեկան բռնությունը կանխարգելող այլ մարմինների համար:

2. Ուղեցույցի նպատակն է.

1) նպաստել ընտանեկան բռնության ենթարկված անձանց նույնացման, ուղղորդման և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացին.

2) ապահովել ընտանեկան բռնության ենթարկված անձանց նույնացում իրականացնող մարմիններին համապատասխան գործիքներով և մեթոդաբանությամբ:

II. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող և ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող ու ընտանեկան բռնությունը կանխարգելող մարմինները

3. Ընտանեկան բռնությունը, համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) **ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառումն է կամ տնտեսական միջոցներից զրկելը:** Հաճախ ընտանեկան բռնությունը դրսևորվում է որպես ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական բռնությունների մեկ ամբողջություն:

4. Ընտանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանությունն իրականացվում է իրավապահ մարմինների, տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող համապատասխան կազմակերպությունների համագործակցության միջոցով: Առաջինները կանխարգելում են ընտանեկան բռնությունը, իսկ երկրորդները ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրում են վերականգնողական, իրավաբանական և սոցիալական այլ աջակցություն:

5. Ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող և այն կանխարգելող մարմինները համագործակցում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի սեպտեմբերի 10-ի N1044-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրենց լիազորությունների շրջանակում:

6. Ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող և այն կանխարգելող մարմիններն են՝

1) **սոցիալական աջակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, (այսուհետ՝ լիազորած մարմին)**, որն իրականացնում է Օրենքով սահմանված ընտանեկան բռնության ենթարկված անձանց սոցիալական պաշտպանությանն ուղղված լիազորությունները, իր իրավասությունների շրջանակներում մշակում և իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառում ընտանեկան բռնության ենթարկված անձանց նկատմամբ պետական քաղաքականությունը.

2) **տարածքային մարմինները**, որոնք իրենց սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում են Օրենքով նախատեսված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալական ծառայություններ.

3) **սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները (այսուհետ՝ օթևան տրամադրող կազմակերպություն)**, որոնք մատուցում են սոցիալական ծառայություն՝ ուղղված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը.

4) **Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության դեմ պայքարի պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ ոստիկանություն)**, որը.

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախականիսում, կանխում, հայտնաբերում և բացահայտում է ընտանեկան բռնության դեպքերը կամ դրա կատարման իրական վտանգը՝ ձեռնարկելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցառումներ,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառում է ընտանեկան բռնությունից պաշտպանող կամ այն կանխարգելող հատուկ մեխանիզմներ,

գ. հսկողություն է իրականացնում ընտանեկան բռնությունից պաշտպանելու կամ այն կանխարգելելու նպատակով կիրառված հատուկ մեխանիզմների պահանջների կատարման նկատմամբ,

դ. այն ընտանիքի անդամներին, որտեղ կատարվել է ընտանեկան բռնություն կամ առաջացել է այդպիսի իրական վտանգ, իրազեկում է նրանց իրավունքների, պաշտպանության հասանելի միջոցների և ծառայությունների մասին,

ե. անհրաժեշտության դեպքում ընտանեկան բռնության զոհերին, նրանց երեխաներին և խնամքի տակ գտնվող անձանց, նրանց համաձայնությամբ, ուղղորդում

է հոգեբանական, իրավաբանական, բժշկական, սոցիալական և այլ անհրաժեշտ օգնություն և պաշտպանություն տրամադրող համապատասխան կառույց,

զ. ընտանեկան բռնությունից պաշտպանություն և դրա կանխարգելում իրականացնելու նպատակով համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

է. լիազոր մարմին տրամադրում է տեղեկատվություն ընտանեկան բռնությանն առնչվող հարցերով,

ը. պարբերաբար անցկացնում է ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման, ընտանեկան բռնության զոհերի հետ ճիշտ շփման վերաբերյալ ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացներ,

թ. ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

5) **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը**, որը կազմակերպում է առողջապահական կազմակերպություններից ընտանեկան բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը իրավասու մարմիններին հաղորդելու գործընթացը, ապահովում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

6) **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը**, որը, համաձայն համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերի, իրականացնում է ուսումնական հաստատություններից ընտանեկան բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը իրավասու մարմիններին.

7) **խնամակալության և հոգաբարձության մարմինները**, որոնք.

ա. օրենսդրությամբ սահմանված կարգով օգնություն են ցուցաբերում ծնող(ներ) ունեցող և ընտանիքում ապրող ընտանեկան բռնության ենթարկված անձանց կամ դրա իրական վտանգի ենթակա անչափահասներին, ծնողներ չունեցող և խնամակալների (հոգաբարձուների, որդեգրողների) կամ խնամատար ընտանիքում ապրող ընտանեկան բռնության ենթարկված անձանց կամ դրա իրական վտանգի ենթակա անչափահասներին, ինչպես նաև դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված ընտանեկան բռնության ենթարկված անձանց կամ դրա իրական վտանգի ենթարկված անձանց,

բ. իրավասու մարմիններում, այդ թվում՝ դատարանում օրենքով սահմանված կարգով իրականացնում են ընտանեկան բռնության ենթարկված անձ հանդիսացող անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը.

8) **Միգրացիոն պետական ծառայությունը**, որն աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձ դարձած փախստականներին, միգրանտներին, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց՝ ընտանեկան բռնությունից պաշտպանության մեխանիզմներից լիարժեք օգտվելուն.

9) **պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մյուս մարմինները**, որոնք կազմակերպում են իրենց գործառույթներից բխող շփման

տիրույթում հայտնված ընտանեկան բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը որևէ իրավասու մարմնի հաղորդելու գործընթացը:

7. **Միջազգային, հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները, քաղաքացիական հասարակությունը** ընտանեկան բռնությունից պաշտպանություն և դրա կանխարգելում իրականացնելու նպատակով համագործակցում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

III. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հայտնաբերումը, ուղղորդումը և տեղեկատվության փոխանցումը

8. Ուղղորդումը ընտանեկան բռնության ենթարկված անձանց և համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմնի, հասարակական կամ այլ կազմակերպության միջև կապի ստեղծումն է և այդ անձանց շահերին առնչվող խնդիրների լուծումը համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին, հասարակական կամ այլ կազմակերպություն փոխանցելը: Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդումն ու բռնության մասին տեղեկատվության փոխանցումը իրականացվում է կախված բռնության դեպքը բացահայտող կամ հայտնաբերող մարմնից.

1) եթե հայտնաբերող մարմինը **լիազորած մարմինն է**, ապա ընտանեկան բռնության ենթարկված անձանց մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվությունն անհապաղ տրամադրում է ոստիկանությանը, իսկ բռնության ենթարկված անձանց ուղղորդում տարածքային մարմին՝ աջակցության գործընթացը կազմակերպելու համար.

2) եթե հայտնաբերող մարմինը **ոստիկանությունն է**, ապա վերջինս ձեռնարկում է օրենքով իրեն վերապահված գործառույթներ.

ա. բռնության ենթարկված անձից ընդունում է հաղորդում,

բ. վերցնում է բացատրություններ՝ ինչպես բռնության ենթարկված անձից, այնպես էլ ականատեսներից և բռնություն գործադրող անձից,

գ. անհրաժեշտության դեպքում նշանակում է բռնության ենթարկված անձի դատաբժշկական և դատահոգեբանական փորձաքննություն,

դ. օրենսդրությամբ նախատեսված կարգով ստեղծված նյութերին տալիս է համապատասխան ընթացք,

ե. աջակցության գործընթացը կազմակերպելու համար բռնության ենթարկված անձանց ուղղորդում է լիազորած մարմին կամ տարածքային մարմին կամ օթևան տրամադրող կազմակերպություն,

զ. եթե բռնության ենթարկված անձը անչափահաս է, վերջինիս մասին տեղեկատվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին կամ խնամակալության և հոգաբարձության մարմին.

3) եթե հայտնաբերող մարմինը **տարածքային մարմինն է**, ապա վերջինս ընտանեկան բռնության դեպքի հայտնաբերման կամ դրա հիմնավոր կասկածի դեպքում.

ա. իրականացնում է ենթադրյալ ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացում՝ համաձայն «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N114-Ա/1 հրամանի,

բ. գնահատում է տվյալ ընտանիքի սոցիալական կարիքները, ըստ անհրաժեշտության բացում սոցիալական դեպք, կազմում անհատական ծրագիրը, կազմակերպում է դրա իրականացումը, սոցիալական ուղեկցումը կամ փոխանցումը մասնագիտացված կազմակերպությանը, և ըստ անհրաժեշտության՝ շարունակական հսկողությունը,

գ. տալիս է եզրակացություն ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման մասին՝ ուղղորդելով նրան ընտանեկան բռնության ենթարկված անձանց օթևան տրամադրող կազմակերպություն,

դ. համայնքային ոստիկանության բաժնի կամ անչափահասների գծով բաժնից ստանալով համապատասխան տեղեկատվություն ընտանեկան բռնության դեպքի հայտնաբերման մասին իրականացնում է սույն կետի 3-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով սահմանված գործողությունները.

4) եթե հայտնաբերող մարմինը **պեղական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն են**, ապա յուրաքանչյուր այն հիմնավոր կասկածի դեպքում, որ իրենց գործառույթներից բխող շփման տիրույթում հայտնված անձն ենթարկվել է ընտանեկան բռնության, նրան ուղղորդում են տվյալ անձի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող տարածքային մարմին կամ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին կամ օթևան տրամադրող կազմակերպություն կամ այդ անձի վերաբերյալ տեղեկությունը, նրա (կամ նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնության առկայության պարագայում, փոխանցում են տվյալ անձի փաստացի բնակության վայրի տարածքային մարմին:

9. Ընտանեկան բռնության ենթարկված անձի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում, օթևան տրամադրող կազմակերպությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան համապատասխան տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում, կազմակերպում է ընտանեկան բռնության ենթարկված անձի տեղափոխումը օթևան, իմչպես նաև նրա ընդունելությունը օթևանում:

10. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց մասին տեղեկատվության փոխանցման հիմնական սկզբունքն է գաղտնիության պահպանումը, իսկ ծառայությունների մատուցման հիմնական սկզբունքները՝ սոցիալական խնամառության բացառելը, համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ վստահության մթնոլորտ ստեղծելու և խնդրի լուծման համար հնարավոր ուղիներ գտնելու միջոցով՝ ապահովելով մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

11. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդումը կամ հանցագործության մասին տեղեկատվության փոխանցումը պետք է լինի բռնության դեպքի մասին տեղեկանալուց անմիջապես հետո բանավոր, իսկ դրանից հետո գրավոր՝ առավելագույնը երեք օրվա ընթացքում:

12. Ընտանեկան բռնության ենթարկված անձը ուղղորդվում է միայն իր գրավոր կամ բանավոր համաձայնությամբ: Եթե բռնության ենթարկված անձը երեխա է, ապա նա ուղղորդվում է իր ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր

համաձայնությամբ: Եթե երեխայի նկատմամբ բռնությունը տեղի է ունեցել ընտանիքում, ապա համաձայնությունը տրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

13. Ընտանեկան բռնության ենթարկված անձի կողմից օթևան տեղափոխվելուց հրաժարվելու կամ ընտանեկան բռնության ենթարկված անձին անհետաձգելի բժշկական օգնության տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված օթևան տեղափոխելու անհնարինության դեպքում, օթևան տրամադրող կազմակերպությունը տվյալ անձի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվությունն անհապաղ տրամադրում է ոստիկանությանը, իսկ ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է նաև տվյալ տարածքը սպասարկող տարածքային մարմին, տվյալ վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, ինչպես նաև այն անձանց կամ մարմիններին, որոնցից ստացել էր տեղեկություններ ընտանեկան բռնության ենթարկված տվյալ անձի վերաբերյալ: Ընտանեկան բռնության ենթարկված անձին անհետաձգելի բժշկական օգնության տրամադրելու անհրաժեշտության դեպքում, օթևան տրամադրող կազմակերպությունն անմիջապես կանչում է շտապ բժշկական օգնություն կամ կազմակերպում անձի տեղափոխումը ստացիոնար բժշկական հաստատություն:

14. Ընտանեկան բռնության ենթարկված անձի կողմից օթևան տեղափոխվելուց հրաժարվելու դեպքում, օթևան տրամադրող կազմակերպությունը դրա վերաբերյալ կազմում է համապատասխան արձանագրություն:

15. Ընտանեկան բռնության ենթարկված անձին օթևան տրամադրելիս, անհրաժեշտության դեպքում, միևնույն օթևանով ապահովվում են նաև տվյալ անձի օրինական ներկայացուցիչը և այն երեխան, ով գտնվում է տվյալ անձի փաստացի խնամքի տակ կամ որի օրինական ներկայացուցիչն է հանդիսանում ընտանեկան բռնության ենթարկված անձը, եթե դա բխում է երեխայի շահերից, օթևանը բավարարում է երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչները:

16. Օթևանում ընտանեկան բռնության ենթարկված անձի ընդունելությունն իրականացվում է շուրջօրյա:

IV. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց օթևանում տրամադրվող ծառայությունները և օթևանին ներկայացվող ընդհանուր պահանջները

17. Օթևանով ապահովվելը նպաստում է ընտանեկան բռնության ենթարկված անձի սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների բավարարմանը և բնականոն կենսագործունեության ապահովմանը, միտված է ընտանեկան բռնության ենթարկված անձի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնմանը, ընտանեկան բռնության ենթարկված՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին այդ վիճակից դուրսբերմանը, նրա սոցիալական ներառմանը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը:

18. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց օթևանը տրամադրվում է մինչև 12 ամիս ժամկետով: Օթևան տրամադրելիս, անձը, իր (կամ օրինական ներկայացուցչի)

կամ այլ մարինների կամ օթևան տրամադրող կազմակերպության գնահատմամբ համարվում է ընտանեկան բռնության ենթարկված անձ և օգտվում է օրենքով նախատեսված ծառայություններից, քանի դեռ առկա չեն այդ հանգամանքը հերքող ամբողջական և հիմնավոր փաստեր:

19. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց օթևանում տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝

1) բնափրային օգնություն՝ սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի տրամադրման ձևով.

2) բժշկական օգնություն և սպասարկում.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) խորհրդատվական օգնություն.

5) այլ սոցիալական ծառայություններ (կրթական, մասնագիտացված բժշկական օգնություն և այլն), որոնք, ըստ անհրաժեշտության, օթևան տրամադրող կազմակերպության կողմից կազմակերպվում են մասնագիտական կազմակերպություններում:

20. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև օթևանում բնակվող (գտնվող)՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց օրինական ներկայացուցչին, խնամքի տակ գտնվող երեխային, նրանց անհատական կարիքներին համապատասխան, օթևանում տրամադրվում է՝

1) մահճակալ՝ անկողնային սպիտակեղենի լրակազմով, անհրաժեշտության դեպքում՝ նաև հագուստ, կոշիկ, ներքին սպիտակեղեն և անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ և այլն), երեխաների խնամքի պարագաներ,

2) սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար, բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ:

21. Օթևան տրամադրող կազմակերպությունը՝

1) աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ ընտանիքի հետ սոցիալական կապերը վերականգնելու և նրան ընտանիք վերադարձնելու հարցում.

2) ընտանեկան բռնության ենթարկված անձանց ընտանիքի անդամների հետ իրականացվող սոցիալ-հոգեբանական աշխատանքի միջոցով նպաստում է ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը.

3) անձը հաստատող և սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի (ատեստատ, դիպլոմ և այլն) բացակայության դեպքում ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն՝ դրանք ստանալու գործընթացը կազմակերպելու հարցում.

4) անհրաժեշտության դեպքում ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելության համար փաստաթղթերի ձևակերպման և ներկայացման հարցերում.

5) ըստ անհրաժեշտության, ընտանեկան բռնության ենթարկված անձանց ցուցաբերում է աջակցություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ ստանալու, բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման և (կամ) հաշմանդամության հետ կապված այլ խնդիրների լուծման գործում, այդ թվում՝ անհրաժեշտ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովելու հետ կապված հարցերում.

6) համագործակցելով լիազորած մարմնի՝ զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների հետ, աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց աշխատանքային հմտությունների ձեռքբերմանը, վերապատրաստման և վերամասնագիտացման դասընթացներին մասնակցությանը, ինքնազբաղվածության ապահովմանը և հարմար աշխատանքի տեղավորմանը, ինչպես նաև աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձի հարմար աշխատանքի տեղավորման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործազուրկի և աշխատաշուկայում անմրցունակ անձի կարգավիճակ ստանալու դեպքում՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գործազուրկների և աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար սահմանված զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվելու իրավունքի իրացման հարցերում:

7) իրականացնում է համապատասխան աշխատանքներ՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց հոգեկան կյանքի կարգավորման, սոցիալական միջավայրին հարմարվելու, սթրեսային վիճակներին դիմակայելու, սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը) զարգացնելու և հասարակության կյանքում նրանց արդյունավետ և լիարժեք ներգրավվածությանն աջակցելու նպատակով:

8) անհրաժեշտության դեպքում, աջակցում է թարգմանչական ծառայությունների կազմակերպմանը՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց նրանց հասկանալի լեզվով բանավոր թարգմանություն տրամադրելու, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի գրավոր թարգմանությունն ապահովելու համար:

9) իր իրավասությունների շրջանակներում աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

10) ապահովում է անվտանգ միջավայրով՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց (ինչպես նաև օթևանում բնակվող (գտնվող)՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի օրինական ներկայացուցչին և խնամքի տակ գտնվող երեխային) գերծ պահելով ցանկացած բռնությունից, շահագործումից, իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

11) ըստ անհրաժեշտության համագործակցելով տարածքային մարմնի, խնամակալության և հոգաբարձության մարմնի, Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ, օժանդակում է օթևանում բնակվող (գտնվող) երեխաների կրթությանն ու դաստիարակմանը, այդ թվում նաև՝ կազմակերպում է օթևանում բնակվող (գտնվող) երեխաների հիմնական կրթության մատուցումը, որը կարող է իրականացվել ինչպես մասնավոր դասընթացների, այնպես էլ հանրակրթական կամ հատուկ դպրոցներում աշակերտելու միջոցով:

12) ապահովում է օթևանում բնակվող (գտնվող) անձանց բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ նրանց այնտեղ բնակվելու (գտնվելու) ողջ ժամանակահատվածում: Օթևանում բնակվող (գտնվող) անձանց բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են օթևանի գտնվելու վայրի համապատասխան բժշկական հաստատությունը և օթևանի բժիշկը, իսկ անհրաժեշտության դեպքում, կազմակերպվում է համապատասխան բժշկական հաստատություններ ուղեգրման գործընթացը:

22. Օթևանը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով, ունենա «վստահության» հեռախոս: Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների համար նախատեսված օթևանում, նշված պայմաններից բացի, պետք է ապահովվեն օթևանում երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչները: Օթևանը պետք է ունենա ներքին կարգապահական կամ համակեցության կանոններ՝ հաստատված օթևան տրամադրող կազմակերպության համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից:

V. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ սոցիալական աշխատանքը և սոցիալական աշխատողին ներկայացվող պահանջները

23. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ սոցիալական աշխատանքը պետք է կառուցվի հասցեականության, մարդասիրության, սոցիալական արդարության, ալտրուիզմի, ինչպես նաև հասարակական, խմբային և անհատական շահագրգռվածության ներդաշնակության, տարբերակված մոտեցման, համակարգված և ամբողջականացված սկզբունքների հիման վրա: Այդ սկզբունքները սոցիալական աշխատողներին թույլ են տալիս օգնել և աջակցել այն անձանց, ովքեր հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում, մասնավորապես՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

24. Ընտանեկան բռնության ենթարկված անձի և սոցիալական աշխատողի փոխհամագործակցությունը ձևավորվում է հետևյալ սկզբունքների համաձայն.

1) յուրաքանչյուր ոք իրավունք ունի ինքնադրսևորման.

2) սոցիալական աշխատողները հավատարիմ են սոցիալական արդարության սկզբունքներին.

3) սոցիալական աշխատողները իրենց ամբողջ հմտություններն ու գիտելիքներն օգտագործում են առանձին անհատներին և խմբերին աջակցելու, ինչպես նաև ներանձնային և սոցիալական միջավայրում առկա հակասությունների կարգավորմանն ուղղված գործընթացը զարգացնելու նպատակով.

4) աջակցում են յուրաքանչյուրին, ով դիմում է նրանց օգնության և խորհրդատվության համար, անկախ դիմողի սեռից, տարիքից, նրա ֆիզիկական կարողություններից կամ մտավոր ունակություններից, ռասայից, սեռական կողմնորոշումից, լեզվական պատկանելությունից և այլն.

5) հարգանքով են վերաբերվում առանձին անձանց և խմբերին.

6) պահպանում են անձի անձեռնմխելիության, տվյալների գաղտնիության և իր աշխատանքում տեղեկատվությունից պատասխանատվությամբ օգտվելու սկզբունքները.

7) սերտ համագործակցության սկզբունքով աշխատում են իրենց հաճախորդների հետ ի շահ նրանց, սակայն չվնասելով այլ մարդկանց:

25. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ սոցիալական աշխատանքը բաղկացած է մի քանի փուլերից.

1) դեպքի նույնացում, որի ընթացքում սոցիալական աշխատողը բռնության ենթարկված անձի հետ ծանոթության առաջին փուլում հավաքագրում է նախնական

տեղեկություններ, քննության առնում և կազմում համապատասխան դիմում: Տեղեկություններ ստանալու ճանապարհներն են՝ տուժողի հետ հարցազրույցը, անձնական դիտարկումները, համապատասխան մարմիններին դիմելը: Բռնության ենթարկված անձի հետ արդեն իսկ առաջին հանդիպման ժամանակ կարևոր է հասկանալ, ինչ օգնության կարիք ունի նա առաջին հերթին: Ըստ այդմ, սոցիալական աշխատողը տեղեկացնում է նրան, թե ում դիմել (իրավաբանին, հոգեբանի, բուժաշխատողին)՝ համարժեք օգնություն ստանալու համար:

2) դեպքի ախտորոշում, որի ընթացքում սոցիալական աշխատողը ուշադրություն է դարձնում բռնության հատկանիշների վրա, հիմք ընդունելով բռնության նույնացման չափորոշիչները:

3) անհատական ծրագրի կազմում՝ գործողությունների պլանավորում և բռնության ենթարկված անձի հետ կապի հաստատում, որի ընթացքում սոցիալական աշխատողի կողմից հստակեցվում է ծառայությունների փաթեթի, անհրաժեշտ մասնագետների և կազմակերպությունների շրջանակը: Հաղորդակցությունն անձի հետ իրականացվում է ինչպես կոնկրետ դեպքի համար հատուկ հրավիրված մասնագետների միջոցով, այնպես էլ անմիջապես սոցիալական աշխատողի և հաճախորդի միջև ստեղծված կապի միջոցով:

4) ընտանիքում բռնության ենթարկված անձի իրավիճակին ուղղակի միջամտություն, որի ընթացքում կոնկրետ միջոցառումների իրականացմամբ փոխվում է ընտանիքում ստեղծված ճգնաժամային իրավիճակը դեպի լավը:

5) վերահսկողություն ու գործողությունների գնահատում, որի ընթացքում սոցիալական աշխատողն իրականացնում է կատարված աշխատանքների վերլուծություն՝ բռնության ենթարկված անձի կարիքները բավարարելու նպատակով ընտրած կազմակերպությունների համարժեքության տեսանկյունից:

6) սոցիալական միջնորդության գործընթացի ավարտ, որի ընթացքում ամփոփվում են կատարված աշխատանքները և բռնության ենթարկված անձը դուրս է գալիս սոցիալական աշխատողի վերահսկողությունից:

26. Ընտանեկան բռնության զոհերին սոցիալական աջակցություն տրամադրելիս՝ սոցիալական աշխատողը պետք է հետևի հետևյալ կանոններին:

1) ուշադիր և հանգիստ լսի բռնության ենթարկվածին:

2) չքննադատի նրան:

3) հավատա այն ամենին, ինչ նա կպատմի, սակայն հնարավոր միջոցներով փորձի հավաստիանալ դրանց ճշմարտացիության մեջ:

4) չմեղադրի նրան:

5) չստիպի զոհին դիմել ոստիկանություն (նա պետք է ինքնուրույն կայացնի այդ որոշումը):

6) երբեք չփորձի օգնել «երրորդ անձին» (նրան, ում երբևէ չի տեսել և ում հետ չի քննարկել ստեղծված իրավիճակը):

7) երբեք չկարծի, որ զոհն անօգնական է (բացառությամբ, երբ վերջինս անգիտակից վիճակում է):

8) աջակցի զոհին օգտվել այն ռեսուրսներից, միջոցներից, ուժից, որն իրենք ունեն:

27. Բռնության դեպքում ամենից հաճախ սոցիալական աջակցության կարիքն ունեն հետևյալ խմբերի ներկայացուցիչները:

1) հոգեբանական բռնության ենթարկվածները:

2 ընտանիքի անդամներին կամ մտերիմներին կորցրածները, մասնավորապես՝ այրիները.

3) հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները.

4) հաշմանդամություն ունեցող կանայք.

5) անչափահաս երեխաներ ունեցող միայնակ մայրերը.

6) հղի կանայք, այդ թվում նաև միայնակ և անչափահաս.

7) միայնակ ծնողները.

8) աղքիկները, որոնք առևանգման զոհ են դարձել.

9) բազմակնության զոհ դարձած կանայք.

10) վաղ ամուսնությունների զոհերը.

11) ընտանիքի անդամների հետ հակասությունների մեջ գտնվողները:

28. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ սոցիալական աշխատանքում հատկապես կարևոր նշանակություն ունեն սոցիալական աշխատողի որակական հատկանիշները, որոնց շնորհիվ նրանք օթևան տրամադրող կազմակերպության և սոցիալական աջակցություն ստացողների հետ կկարողանան հաստատել արդյունավետ հաղորդակցություն և պահպանել զգացմունքային հարաբերություններ՝ մինչև նրանց խնդիրը ամբողջական լուծում ստանա: